Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1345[6]-27.04.2026-ՊԱ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք)14-րդ հոդվածում՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տալու համար	բազային տուրքի 28.65-ապատիկի չափով».

2) 1.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.1. Հայաստանի Հանրապետության փախստականի կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տալու համար	բազային տուրքի 28.65-ապատիկի չափով».

3) 1.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու նույնականացման քարտ տալու համար	բազային տուրքի 5.95-ապատիկի չափով».

4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.3-րդ կետով.

«1.3. Հայաստանի Հանրապետության փախստականի	բազային տուրքի 5.95-ապատիկի չափով».

նույնականացման քարտ տալու համար	

5) 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստացած անձին նույնականացման քարտ տալու համար	բազային տուրքի 5.95-ապատիկի չափով.

6) լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին կետով.

«2.1. Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ստացած անձին կոնվենցիոն ճամփորդական փաստաթուղթ տալու համար	բազային տուրքի 28.65-ապատիկի չափով

7) 8-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

8. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կացության կարգավիճակի հետ կապված փաստաթղթեր տալու համար՝

ա) Հայաստանի Հանրապետությունում ժամանակավոր կացության կարգավիճակ տալու դիմումը քննարկելու համար	բազային տուրքի 150-ապատիկի չափով
բ) Հայաստանի Հանրապետությունում մշտական կացության կարգավիճակ տալու դիմումը քննարկելու համար	բազային տուրքի 250-ապատիկի չափով
գ) Օտարերկրացուն ժամանակավոր կամ մշտական կացության քարտ տալու համար	բազային տուրքի 5.95-ապատիկի չափով

դ) «Օտարերկրացիների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ օրինական բնակության իրավունքը հավաստող վկայականը տալու դիմումը քննարկելու համար	բազային տուրքի 30-ապատիկի չափով
ե) «Օտարերկրացիների մասին» օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ օրինական բնակության իրավունքը հավաստող վկայականը տալու համար	բազային տուրքի 5.95-ապատիկի չափով

8) լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով.

«8.1. Հայաստանի Հանրապետության դիվանագիտական անձնագիր տալու համար ՝	բազային տուրքի 28.65-ապատիկի չափով»

Հոդված 3. Օրենքի 26-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Սույն օրենքի 14-րդ հոդվածով նախատեսված փաստաթուղթ ստանալու համար Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է անձանց որոշ խմբերի համար սահմանել աջակցություն պետական տուրքի ամբողջական կամ մասնակի վճարման ձևով :»:

Հոդված 4 Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Անձը հաստատող փաստաթղթի մասին» օրենքով նախատեսված էլեկտրոնային միասնական հարթակի գործարկման մասին իր պաշտոնական կայքում միգրացիայի և քաղաքացիության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հայտարարության հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը, բայց ոչ ուշ, քան 2026 թվականի նոյեմբերի 1-ը: